ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅՈԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 101 - 102 (16700) ՇԱԲԱԹ, 22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՍՏԱՆՁՆԵՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեկտեմբերի 16-ին Թելավիում, «Բատոնիս ցիխե»-ում, էրեկլե երկրորդ թագավորի (1720-1798) նստավայրում, կայացավ Վրաստանի հինգերորդ նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու երդմնակալության պաշտոնական արարողությունը:

- Ես՝ Վրաստանի նախագահս, Աստծո եւ ժողովրդի առջեւ հայտարարում եմ, որ կպահպանեմ երկրի սահմանադրությունն ու անկախությունը, նրա միասնությունը եւ անբաժանելիությունը, բարեխղճորեն կկատարեմ նախագահի պարտականությունները, հոգ կտանեմ քաղաքացիների անվտանգության ու նրանց բարօրության, իմ ժողովրդի եւ հայրենիքի վերածննդի ու փառքի մասին,- հանդիսավորապես հայտարարեց նոյեմբերի 28-ին նախագահական երկրորդ փուլի արդյունքներով (ընտրողների 59,56 տոկոսի աջակցությամբ) Վրաստանի հինգերորդ նախագահ ընտրված Սալոմե Զուրաբիշվիլին:

Նշենք, որ երդմնակալության արարողությանը ներկա էր 1800 հյուր, այդ թվում՝ 55 երկրների պատվիրակություններից: Հյուրերի թվում էր Հայաստանի պատվիրակությունը՝ երկրի նախագահ Արմեն Սարգսյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին Հայաստանի ազգային անվտանգության քար-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է»

Դեկտեմբերի 16-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, երդմնակալության արարողությանը պաշտոնական երդումից հետո, հանդես եկավ ծրագրային ելույթով, որտեղ ուշադրությունը բեւեռեց երկրի պատմության եւ արդի միջազգային կապերի, Վրաստանի առջեւ ծառացած հիմնախնդիրների՝ մարդու իրավունքների պաշտպանության, ազատության, տարածքային ամբողջականության վերականգնման, երկրի սոցիալ-տնտեսական հեռանկարների եւ նշանակալի այլ հարցերի վրա: Ստորեւ «Վրաստանը» իր ընթերցողներին է ներկայացնում Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու ծրագրային ելույթը:

ՎՐԱՍՏԱՆ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ

- Նշանակալից է, որ հենց հիմա, երբ մենք նշում ենք երկրի անկախության վերականգնման 100-ամյակը, ես՝ վտարանդիության մեջ ծնվածս, դարձա Վրաստանի նախագահ: Դրանով յուրովի փակվեց շրջանը՝ Ռուսաստանի 11-րդ բանակի ներխուժման եւ խորհրդային բռնազավթման արդյունքում վտարանդի դարձածի ժառանգը այսօր սահմանադրությամբ շնորհված իրավասությունը-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՑ ՎՐԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է

ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ, ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱՎ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, դեռեւս 2012 թվականին Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ եղավ երկրի հիմնական օրենքի՝ սահմանադրության դրույթների նոր խմբագրության մշակմանն ու հաստատմանը: 11 գլխից եւ 78 հոդվածից բաղկացած նոր սահմանադրությունը հստակեցնում է մի կողմից մարդու իրավունքների չափանիշները, մյուս կողմից՝ իշխանության ճյուղերի միջեւ իրավասությունների բաշխումը:

Սահմանադրական հիմնական փոփոխությունները խորհրդարանի կողմից հաստատվեցին 2017 թվականի սեպտեմբերի 26-ին, թեպետ երկրի այն ժամանակվա նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին վետո դրեց եւ հիմնավորված դիտողություններով վերադարձրեց խորհրդարանին: Օրենսդիր մարմինը՝ 110 կողմ, 8 դեմ ձայներով, հաղթահարեց նախագահական վետոն եւ սահմանադրության նոր նախագիծը հաստատեց 117 կողմ, 7 դեմ ձայներով: Միայն դրանից հետո, Գիորգի Մարգվելաշվիլին իր ստորագրությամբ վավերացրեց երկրի հիմնական օրենքի նոր խմբագրությունը:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԱՎԵԼԻ ՔԱՆ ԲՆԱԿԱՆ Է, ՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԱՅՍՕՐ ԱՅՍՏԵՂ Է»

Ինչպես արդեն հաղորդել ենք, դեկտեմբերի 16-ին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի գլխավորած պատվիրակությունը ներկա էր Վրաստանի նորընտիր նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու երդմնակալության պաշտոնական արարողությանը:

Սալոմե Զուրաբիշվիլին ողջունում է Արմեն Սարգսյանին (ձախից՝ Ֆրանսիայի նախկին նախագահ Նիկոլա Սարկոզին, աջից՝ Վրաստանի չորրորդ նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին՝ տիկնոջ հետ)

Մինչ արարողությունը, պատասխանելով լրագրողի հարցին, Արմեն Սարգսյանը, մասնավորապես, նշեց.

- Մենք իսկապես եղբայրական ժողովուրդներ ենք: Ավելի քան բնական է, որ Հայաստանի Հանրապետության նախագահը պետք է այսօր ներկա լիներ այստեղ, երբ Վրաստանը նոր նախագահ է ընտրել:

Շնորհավորում եմ Վրաստանին, երկրի նախագահին: Վրաստանին ու նոր նախագահին առաջիկա տարիներին հաջողություններ եմ մաղթում:

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵՆ ԵՎ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԿԱՐԵՎՈՐԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

Դեկտեմբերի 17-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հանդիպում ունեցավ Վրաստանի հինգերորդ նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու երդմնակալության արարողությանը մասնակցելու համար, աշխատանքային այցով Վրաստանում գտնվող Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանի հետ:

Թբիլիսիում, Վրաստանի կառավարության գրասենյակում կայացած առանձնազրույցին, Մամուկա Բախտաձեն Արմեն

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁՆ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ»

Դեկտեմբերի 20-ին, Թբիլիսիի «Բալթիմոր» հյուրանոցում, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հանդես եկավ կառավարության մեկամյա գործունեության արդյունքների համառոտ ամփոփման զեկույցով:

Հաշվետվության շնորհանդեսին, որին ներկա էին երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչները, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքը, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի, ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, վարչապետը ներկայացրեց այն երկու հիմնական մարտահրավերները, որոնք ծառացած են երկրի առջեւ:

- Վրաստանի առջեւ ունենք երկու ցավալի մարտահրավեր, դրանք են՝ օկուպացիան եւ աղքատությունը, սա մեր ազգային խնդիրն է, երկու մարտահրավերներն էլ պետք է հաղթահարենք համատեղ ջանքերով, եւ դրա շուրջ պետք է միավորված լինի Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացու ջանք: Մեր նպատակն է, որ Վրաստանը վերադառնա իր մեծ եվրոպական ընտանիք, որտեղ կարեւոր արժեքներ են մարդու ազատությունը, մարդու իրավունքները, դատարանը եւ մամուլի ազատությունը, օրենքի գերագույն լինելը, մասնավոր սեփա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՍՏԱՆՁՆԵՑ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տուղար Արմեն Գրիգորյանը, ՀՀ ԱԳ փոխնախարար Շավարշ Քոչարյանը: Արարողությանը ներկա էին նաեւ Ֆրանսիայի պատվիրակությունը, երկրի նախագահ Էմանուել Մակրոնի որոշմամբ՝ նախկին նախագահ Նիկոլա Սարկոզիի գլխավորությամբ, Թուրքիայի փոխնախագահը, Ադրբեջանի խորհրդարանի խոսնակը, Սերբիայի ազգային ասամբլեայի խոսնակը, Չեխիայի սենատի նախագահը, Լիտվայի սեյմի խոսնակը, Լեհաստանի սենատի մարշալը եւ նախագահի վարչակազմի ղեկավարը, Մոլդովայի փոխվարչապետը, Թուրքմենստանի առեւտրի եւ արտաքին տնտեսական հարաբերությունների նախարարը, Արաբական Միացյալ Էմիրությունների կլիմայի փոփոխությունների եւ միջավայրի նախարարը, Իսրայելի քնեսեթի (խորհրդարան) փոխխոսնակը եւ արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալը, ՍՈՒԱՄ-ի գլխավոր քարտուղարը, Ուկրաինայի արտաքին գործերի փոխնախարարը, Ղրղզստանի արտաքին գործերի նախարարի տեղակալը, ԱՄՆ-ից ՅՈՒՍԱԻԴ-ի ներկայացուցիչը, պաշտոնական այլ անձինք:

Երդմնակալության արարողության մասնակիցների թվում էին Վրաստանի չորրորդ նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, վարչապետ Մամուկա Բախտաձեն, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձեն, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, Վրաստանի կառավարության եւ երկրի օրենսդիր մարմնի անդամներ, հասարակական ու ստեղծագործական միությունների, տեղական եւ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների, երկրում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, Վրաց Ուղղափառ եկեղեցու բարձրաստիճան հոգեւոր անձինք՝ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի գլխավորությամբ:

Երդմնակալության արարողությանը մասնակցեցին նաեւ վիրահայ համայնքի ներկայացուցիչներ (տես 4-րդ էջում):

ԼԱՇԱ ԺՎԱՆԻԱՆ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԸ՝ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՆՈՐ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ

Դեկտեմբերի 18-ին Վրաստանի հինգերորդ նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին այցելեց Թբիլիսիի Աթոնելի փողոցի, «Օրբելյանների տուն» անվամբ հայտնի իր նստավայր, որտեղ անցյալ դարի 90-ական թվականներին Վրաստանում ԱՄՆ դեսպանությունն էր, ծանոթացավ իր աշխատասենյակին:

Սալոմե Զուրաբիշվիլուն ուղեկցում էր նորընտիր նախագահի վարչակազմի ղեկավար Լաշա Ժվանիան:՝

Սալոմե Զուրաբիշվիլու խոսքով, նախագահական վարչակազմը կհամալրվի մինչեւ դեկտեմբերի 24-ը: Ըստ նախագահի հայտարարության, ստեղծվելու է մեդիա-ակումբ, որտեղ նա լրագրողների հետ կխոսի մի քանի հարցերի շուրջ:

- Շաբաթվա վերջին կամ դեկտեմբերի 24-ին ես ձեզ կասեմ, թե ովքեր են լինելու վարչակազմի գլխավոր խմբում: Ես ձեզ կհրավիրեմ, այստեղ կլինի ձեր տունը, եւ մենք տարբեր ձեւաչափի հարաբերություններ կունենանք,- հայտարարել է Սալոմե Զուրաբիշվիլին:

Աթոնելիի նստավայրի նախագահական շենքը ամբողջովին ավարտված չէ, սակայն հետեւի կողմում գտնվող շենքը ավարտված է, եւ նախագահը գործունեությունը կսկսի ժամանակավորապես այնտեղ:

Նշենք, որ նորընտիր նախագահի վարչակազմի ղեկավար, 45-ամյա Լաշա Ժվանիան ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանը, աշխատել Վրաստանի արտաքին գործերի նախարարության տարբեր դեպարտամենտներում, եղել է Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանը Իսրայելում: Ապա պարբերաբար զբաղեցրել է Վրաստանի արտաքին գործերի, ֆինանսների փոխնախարարի պաշտոնը: 2008 թվականին ընտրվել է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր: Նույն տարում նշանակվել է Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար: Պաշտոնաթողությունից հետո, գլխավորել է Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարքի հիմնադրամը:

ԳՈՐԾԱԴԻՐ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁՆ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կանությունը: Դրան հասնելը բարդ խնդիր է, քանի որ Վրաստանը կանգնած է մարտահրավերների առջեւ,- հայտարարել է Մամուկա Բախտաձեն:

Նրա խոսքով, Վրաստանում իրական փոփոխությունների իրականացումն սկսվել է 2012 թվականին եւ առավելագույնն արվում է աղքատությունը հաղթահարելու համար:

- Կառավարության՝ 5 սկզբունքի վրա հիմնված ծրագրի առաջին սկզբունքի համաձայն, պետք է ավարտին հասցնենք Վրաստանի եվրոպական ընտրությունն ու դառնանք եվրոպական ընտանիքի լիիրավ անդամ: Պետք է վերադառնանք մեր եվրոպական ընտանիք, լինենք եվրատլանտյան տարածքի լիիրավ անդամն ու լիիրավ մասնակիցը,- հայտարարել է Բախտաձեն:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵՆ ԵՎ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԿԱՐԵՎՈՐԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Սարգսյանին շնորհակալություն հայտնեց Վրաստանի նորընտիր նախագահի երդմնակալության արարողությանը մասնակցելու համար եւ ընդգծեց, որ հաճելի է Հայաստանի նախագահին հյուրընկալել Վրաստանում:

Իր հերթին, Արմեն Սարգսյանը նշեց, որ իր համար նույնպես մեծ պատիվ է Վրաստանի համար այս կարեւոր իրադարձությունների շրջանում գտնվել հարեւան ու բարեկամ երկրում:

Հանդիպմանը կողմերը մտքեր փոխանակեցին վրացահայկական հարաբերությունների ներկա օրակարգի շուրջ, ընդգծեցին արդյունավետ համագործակցությունը տարբեր ոլորտներում առավել խորացնելու կարեւորությունը: Կողմերն ընդգծեցին առեւտրատնտեսական կապերի զարգացման առումով առկա ներուժը՝ նշելով, որ դրա վերաբերյալ քննարկումները պլանավորվում են միջկառավարական տնտեսական հանձնաժողովի շրջանակներում: Անդրադարձ կատարեցին նաեւ կրթության ու մշակութային ոլորտներում փոխգործակցության հարցերին:

Այցի շրջանակներում, Արմեն Սարգսյանի պաշտոնական հանդիպումներին ներկա էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը:

ԿԱՅԱՑԱՎ ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱՅԻ ԵՎ ՎԱԼԵՐԻ ՕՍԻՊՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Դեկտեմբերի 18-ին Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիան հանդիպում ունեցավ երկօրյա պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Հայաստանի ոստիկանության պետ Վալերի Օսիպյանին:

Երկու երկրների իրավապահ կառույցների ղեկավարների առանձնազրույցին հաջորդեց Վրաստանի ներքին գործերի նախարարության եւ Հայաստանի ոստիկանության ներկայացուցիչների ընդլայնված նիստը: Քննարկվեց փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող եւ փոխգործակցության խորացմանն ուղղված հարցերի լայն շրջանակ:

Այցի շրջանակներում, Հայաստանի ոստիկանության պատվիրակությունը եղավ նաեւ պարեկային ոստիկանությունում:

Հայաստանի ոստիկանության պետ Վալերի Օսիպյանն ու պատվիրակության անդամները շրջեցին պարեկային ոստիկանության շենքում, ծանոթացան պայմաններին, տեխնիկական հագեցվածությանը, պարեկային ծառայության մեքենաներին եւ այլն:



ԱՄՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՁՈՐՔԵՐԸ ՍԻՐԻԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ԲԵՐՎՈՒՄ

ԱՄՆ-ը սկսել է Սիրիայից զորքերի դուրսբերումը: Այս տեղեկությունը հաստատել է ԱՄՆ Սպիտակ տան մամուլի քարտուղար Սառա Սանդերսը: Նա նշել է, որ հինգ տարի առաջ «Իսլամական պետություն» ահաբեկչական խմբավորումը Մերձավոր Արեւելքում հզոր ու վտանգավոր ուժ էր, սակայն ԱՄՆ-ը կարողացել է այն ոչնչացնել:

Նշենք, որ ԱՄՆ-ը «Իսլամական պետություն» խմբավորման դեմ Իրաքում ռազմական գործողություններ էր սկսել 2014 թվականի հունիսին, իսկ Սիրիայում՝ 2014-ի սեպտեմբերին:

Մինչեւ վերջերս Սիրիայում էին շուրջ 2 հազար, իսկ Իրաքում՝ 5200 ամերիկացի զինծառայող:

Reuters գործակալության տվյալներով,՝ ԱՄՆ-ը մտադիր է Սիրիայից զորքերը դուրս բերել 60-100 օրվա ընթացքում, իսկ պետդեպարտամենտի աշխատակիցները կտարհանվեն երկրից 24 ժամվա ընթացքում:

ԵՄ ԵՐԿԱՐԱՁԳՎՈՒՄ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Եվրամիության 28 պետությունների դեսպանները դեկտեմբերի 17-ին հաստատեցին կես տարով՝ մինչեւ 2019 թվականի հուլիսի 31-ը, Ռուսաստանի դեմ սեկտորալ տնտեսական պատժամիջոցների գործողության երկարաձգումը:

Այս որոշումը տեխնիկական բնույթ է կրում. այն պարզապես ամրագրում է այդ պատժամիջոցների երկարաձգման վերաբերյալ ԵՄ-ի՝ դեկտեմբերի 13-ի գագաթաժողովում ձեռք բերված պայմանավորվածությունը: Մինչեւ տարեվերջ դրան պետք է հավանություն տա նաեւ Եվրամիության նախարարական խորհուրդը:

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ ՀՐԱԺԱՐՎԵՑԻՆ ՔՆՆԱՐԿԵԼ ԹԵՐԵԶԱ ՄԵՅԻՆ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՔՎԵ ՀԱՅՏՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Մեծ Բրիտանիայի կառավարությունը չի բավարարել երկրի վարչապետ Թերեզա Մեյին անվստահության քվե հայտնելու ընդդիմադիր Լեյբորիստական կուսակցության առաջնորդ Ջերեմի Քորբինի պահանջը:

Ավելի վաղ, Քորբինը խորհրդարանում պահանջ էր ներկայացրել Մեյին անվստահության քվե հայտնելու հարցի վերաբերյալ: Նա «անընդունելի» է համարել Brexit-ի պայմանների շուրջ Բրյուսելի հետ ձեռք բերված համաձայնագրի խորհրդարանական քվեարկությունը հաջորդ տարի հետաձգելու նրա որոշումը, որը պետք է կայանար դեկտեմբերի 11-ին:

ԲԵԼԳԻԱ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ է ՏՎԵԼ

Բելգիայի վարչապետ Շառլ Միշելը հայտարարել է հրաժարականի մասին: Այս մասին նա հայտնել է խորհրդարանում ելույթի ժամանակ, իշխող կոալիցիայի լուծարումից հետո:

- Ես ընդունում եմ, որ իմ առաջարկները համոզիչ չեն եղել, եւ իմ կոչը չի լսվել: Ես որոշում եմ կայացրել՝ իմ հրաժարականը Բելգիայի թագավորին ներկայացնել, եւ անհապաղ մեկնում եմ թագավորի մոտ,- ասել է Շառլ Միշելը:

Հիշեցնենք՝ Բելգիայում կառավարական ճգնաժամը սկսվել է դեկտեմբերի սկզբին, Միգրացիայի մասին ՄԱԿ-ի գլոբալ պայմանագրի հարցում իշխող կոալիցիայի հետ տարաձայնությունների պատճառով:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ՝ ԲԱՐՁՐԱԼԵՌ ՖԵՐՄԵՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն ներկայացրեց բարձրալեռ տարածաշրջանների զարգացման 2019-2023 թվականների համար գործադիր իշխանության ռազմավարության գլխավոր ուղղությունները:

Նրա խոսքով, բարձրալեռ տարածաշրջանների ազգային խորհուրդը եւ բարձրալեռ բնակավայրերի զարգացման հիմնադրամը այդ երկրամասերում, ենթակառույցների զարգացման նպատակով, արդեն հատկացրել է 66 միլիոն լարի: Վարչապետի խոսքով, այդ ուղղությամբ առաջընթացի ապահովման նպատակով, հարկ է մշակել երկարաժամկետ ռազմավարություն: Ինչպես նշեց վարչապետը, բարձրալեռ բնակավայրերին կարգավիճակ է շնորհվել 1730 բնակավայրերի զարգացման ռազմավարության կիրարկման դեպքում, արտոնություններ սահմանել ավելի քան 300 հազար քաղաքացու համար, ինչը կազմում է երկրի բնակչության 10 տոկոսը:

Անդրադառնալով բարձրալեռ բնակավայրերում ենթակառույցների զարգացման թեմային՝ վարչապետը նշեց, որ 2020 թվականին բարձրալեռ բոլոր բնակավայրերն ապահովված կլինեն բջջային կապով եւ համացանցով:

- 2019 թվականին բնակավայրի կարգավիճակ ունեցող գյուղերի 400-ից ավելի ընտանիքներ, որոնք մինչ այդ չունեին էլեկտրաէներգիա, կապահովվեն էներգիայի այլընտրանքային աղբյուրներով,- նշեց վարչապետը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԵՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ

Դեկտեմբերի 21-ին Վրաստանի ներքին գործերի նախարար Գիորգի Գախարիան, օրենսդիր մարմնի ընդդիմադիր խմբակցությունների պատգամավորների պահանջով, երկրում նախագահական ընտրություններին նախորդած եւ հաջորդած իրադարձությունների կապակցությամբ, հաշվետվությամբ հանդես եկավ խորհրդարանի արտահերթ նիստում:

Նախարարը մանրամասն խոսեց իրավապահ մարմինների գործունեության, ոլորտի բարեփոխումների ընթացքի, հանցագործությունների կանխարգելման ու իրավախախտումների մակարդակի նվազեցման ուղղությամբ իրականացվող աշխատանքների մասին:

Մինչեւ ուշ երեկո, նախարար Գիորգի Գախարիայի եւ պատգամավորների հարցուպատասխանի պայմանակարգով անցկացված հադիպմանը, նախարարը պատասխանեց Ախալքալաքիի, Մառնեուլիի, Դմանիսիի միջադեպերի, ինչպես նաեւ Թբիլիսիի Խորավայի փողոցում տեղի ունեցած աղմկահարույց սպանության հետաքննության հետ առնչվող հարցերին:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ. ԿՍԿՍՎԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

2019 թվականի ապրիլի 1-ից մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 31-ը յուրաքանչյուր մունիցիպալիտետ քայլ առ քայլ պետք է ապահովի վաղ եւ նախադպրոցական հաստատությունների հավատարմագրումը:

Փոփոխությունները կատարվել են «Վաղ եւ նախադպրոցական դաստիարակության ու կրթության մասին» օրենքում: Այդ փոփոխությունների հեղինակներն են խորհրդարանի մեծամասնության անդամներ էկա Բեսելիան եւ Գեդեւան Փոփխաձեն:

Նախաձեռնողների բացատրությամբ, նշված օրենքն ընդունվել է 2016 թվականին, ըստ որի, նախադպրոցական կրթության բարեփոխումները համատեղում են հինգ ուղղություններ: Հաստատություններում նախադպրոցական դաստիարակության ու կրթության պետական ստանդարտների մշակում, շենքերի, ենթակառուցվածքների եւ նյութատեխնիկական բազայի կազմակերպում, սանիտարահիգիենիկ պայմանների պաշտպանություն, սննդի եւ սննդային համակարգի ստանդարտների մշակում, ինչպես նաեւ հաստատություններում համապատասխան որակավորումներով եւ փորձառու մարդկային ռեսուրսներով ապահովում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Դեկտեմբերի 19-ին Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Քեթեւան Ցիխելաշվիլին, Ուկրաինայից բռնազավթված տարածքների եւ ներքին տեղահանվածների նախարար Վադիմ Չերնիշը եւ Մոլդովայի Հանրապետության վերաինտեգրման հարցերով փոխվարչապետ Քրիստինա Լեսնիկը ստորագրեցին համագործակցության հուշագիր:

Հուշագրի շրջանակներում, կողմերը մտադիր են ամրապնդել եւ զարգացնել համագործակցությունը հակամարտությունների կարգավորման ու խաղաղության կառուցման ոլորտում լավագույն փորձի փոխանակման առումով: Հուշագիրը նախատեսում է միջգերատեսչական եռակողմ հարթակի հիմնում, տարածաշրջանային ռազմավարական համագործակցության ծավալում:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

ՕՐԻՆԱԿԱՆՈՐԵՆ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Վրաստանի քաղաքացիներին կթույլատրվի օրինական կերպով աշխատել Ֆրանսիայում: Համապատասխան փաստաթուղթը Ֆրանսիայի նախագահն արդեն ստորագրել է: Այս մասին հայտարարել է Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին:

Ըստ Զալկալիանու, սա Վրաստանի եւ Ֆրանսիայի կառավարությունների միջեւ ակտիվ համագործակցության արդյունքն է: Նախարարը նշեց, որ Վրաստանը համապատասխան համաձայնություն է ունեցել Ֆրանսիայի կառավարության հետ, որը վավերացրել է Ֆրանսիայի խորհրդարանը:

Նախարարի խոսքով, սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո, երիտասարդ մասնագետները, այդ թվում՝ Ֆրանսիայում բարձրագույն կրթություն ստացածները, կարող են Ֆրանսիայում ժամանակավոր կացության թույլտվություն ստանալ եւ օրինական կերպով աշխատել:

Դավիթ Զալկալիանին ասաց, որ Վրաստանի կառավարությունը եւ արտաքին գործերի նախարարությունն ակտիվորեն աշխատում են գործընկեր երկրների հետ՝ հասնելու Վրաստանի քաղաքացիների օրինական աշխատանքի վերաբերյալ համաձայնության:

Վրաստանի ԱԳ նախարարության տեղեկատվությամբ, նշված հարցով խորհրդակցություններ են ընթանում նաեւ այլ երկրների հետ: Ինչպես ասում է նախարարի տեղակալը, բնակության եւ շրջանաձեւ միգրացիայի մասին համաձայնության պատրաստակամություն են հայտնել նաեւ Բուլղարիան եւ Գերմանիան:



ԱՆՑԿԱՑՎԵՑ «ԱՄԲԱՍԱԴՈՐԻԱԼ 2018-Ը»

Դեկտեմբերի 18-21-ը Թբիլիսիում անցկացվեց արտասահմանյան երկրներում Վրաստանը ներկայացնող դիվանագետների ամենամյա ավանդական խորհրդաժողովը:

Խորհրդարանի շենքում անցկացված «Ամբասադորիալ 2018-ը» բացեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին: Դիվանագետների առջեւ ելույթ ունեցան Վրաստանի նորընտիր նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին եւ վարչապետ Մամուկա Բախտաձեն:

Խորհրդաժողովին գնահատեցին արտաքին գործերի նախարարության անցած տարվա գործունեությունը, ներկայացվեցին նոր նախաձեռնություններ, եւ քննարկվեց 2019-2022 թվականների արտաքին քաղաքականության ռազմավարության նախագիծը:

Միջոցառման շրջանակներում քննարկվեցին նախարարությունում ընթացող եւ նախատեսված բարեփոխումները՝ մարդկային ռեսուրսների կառավարման, մասնագիտական զարգացման, ճգնաժամային իրավիճակների կառավարման եւ այլ ուղղություններով:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆ ԱՎԱՐՏՈՒՄ Է ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Վրաստանի օրենսդիր մարմինն այս շաբաթ ավարտեց աշնանային նստաշրջանը: Ըստ կանոնակարգի, երկրի խորհրդարանի աշնանային նստաշրջանը փակվում է դեկտեմբերի երրորդ ուրբաթ օրը:

Աշնանային նստաշրջանի ավարտից հետո՝ դեկտեմբերի 26-28-ը, կիրավիրվի արտահերթ նիստ, որից հետո օրենսդիրը կավարտի աշխատանքը Քութայիսիում գտնվող խորհրդարանի շենքում եւ կվերադառնա Թբիլիսի:

Հիշեցնենք՝ 2019 թվականից խորհրդարանն ամբողջությամբ վերադառնալու է Թբիլիսի:

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ԴԱՎԻԹ ԿԻՐԿԻՏԱՁԵՆ

Գուրջաանիի քաղաքային դատարանը նախնական կալանքի է ենթարկել «Միացյալ ազգային շարժման» շրջանային կազմակերպությունների ղեկավար Դավիթ Կիրկիտաձեին:

Դատարանը լիովին բավարարել է դատախազի պահանջը, ով՝ որպես խափանման միջոց, պահանջել է կալանքը:

Կիրկիտաձեն մեղադրվում է Վրաստանի ՔՕ 353 հոդվածով: Նա նախագահի երդմնակալության օրը Վելիսցիխե գյուղում տեղի ունեցած միջադեպի ժամանակ ոստիկանի նկատմամբ բռնություն է կիրառել:

Կիրկիտաձեն ձերբակալվել է դեկտեմբերի 17-ին:

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԸ ԷԺԱՆԱՑԵԼ Է

Վերջին օրերին վառելանյութը էժանացել է 5-7 թեթրիով: Բենզինի եւ դիզելի գները նվազեցրել են համարյա բոլոր նավթամթերքի ընկերությունները:

Օրինակ՝ «Ռոմպետրոլի» ցանցում մեկ լիտր եվրո ռեգուլարի գինը 2,56 լարի էր, իսկ այսօր 2,49 լարի: «Վիսսոլի» ցանցում եվրո ռեգուլարի գինը 2,54-ից նվազել է մինչեւ 2,49-ը: «Լուկոիլի» լցակայաններում եվրո ռեգուլարի գինը 2,36-ից դարձել է 2,29:

Վառելիքի գնի նվազեցումը կապված է միջազգային շուկայում նավթի գների էժանացման հետ:

ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ներով վերադարձավ՝ որպես անկախության պաշտպան եւ գերագույն գլխավոր հրամանատար,- իր ծրագրային ելույթի սկզբում հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին եւ հավելեց.

- Այսօր, ինչպես բազմիցս իր պատմության ընթացքում, Վրաստանը կրկին հայտնվել է խաչմերուկում: Կրկին կանգնել ենք մեծ մարտահրավերների առջեւ:

Թելավիից հիանալիորեն երեւում է Վրաստանի անցած ուղին՝ հագեցած պայքարով, մարտահրավերներով եւ հաջողություններով: Այս վայրը երկրի զարգացման եւ միասնության պատմական յուրատեսակ տոմսակ է:

Էրեկլե թագավորը պայքարում էր երկրի զարգացման ու միասնության համար: Նա հիմնեց վրացական բանակը եւ հաղթանակներ տարավ բազում մարտերում: Թագավորը դնում էր եվրոպական տիպի պետության հիմքերը: Այստեղ՝ Թելավիում, տապալվեցին Էրեկլե թագավորի երազած պետության ստեղծման նոր չափորոշիչների ներդրման, եվրոպական ուղիով երկիրն առաջնորդելու ծրագրերը: Այստեղ կանգ առավ մեր երկրի զարգացումը: Վրաստանի առջեւ փակվեց անկախ միասնական հզոր պետության ստեղծման ճանապարհը: Դա պայմանավորված էր շատ պատճառներով, այդ թվում՝ թշնամիների մտահղացումներով, սակայն, վերականգնելով անկախությունը, մենք վերադարձանք եվրոպական պետության ստեղծմանը: Այսօր մեր առջեւ կրկին վճռորոշ փուլ է:

«ԿԼԻՆԵՄ ՎՐԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀԸ»

Երդմնակալության արարողությանը, իր ծրագրային ելույթում Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին իր երախտագիտությունը հայտնեց բոլոր նրանց, ովքեր ընտրություններին քվեարկել են իր օգտին: Շնորհակալություն հայտնեց «Վրացական երազանքին», որը նրան պաշտպանեց՝ որպես նախագահի անկախ թեկնածու, եւ դրանով իսկ նշանակալից քայլ կատարեց ժողովրդավարության ամրապնդման ուղղությամբ: Նորընտիր նախագահը շնորհակալություն հայտնեց նրանց, ովքեր չեն պաշտպանել իր թեկնածությունը՝ նշելով, որ տեղյակ է իրեն՝ որպես նախագահ, ճանաչելու հարցում առանձին կուսակցությունների տարբերվող դիրքորոշումների վերաբերյալ:

- Թեպետ այսօրվանից, սահմանադրությամբ շնորհված իրավասություններով, ստանձնում եմ պատասխանատվություն՝ լինել բոլորի նախագահը, Վրաստանի բոլոր քաղաքացիների նախագահը: Դա ժողովրդավարության գլխավոր սկզբունքն է, այդ պատասխանատվության եւ հասկացության վրա է կանգնած արդի պետությունը: Ես կպաշտպանեմ քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, կլինեմ օրենքի գերակայության երաշխիքը, կհոգամ, որպեսզի հզորացնենք քաղաքացիական հասարակությունը եւ բարձրացնենք քաղաքական մշակույթի մակարդակը: Հասարակական համաձայնության հասնելու գործում նշանակալի քաղաքական դեր կարող են կատարել յուրաքանչյուր քաղաքացի, ազատ ԶԼՄ-ներն ու ոչ կառավարական հատվածը,- ընդգծեց Սալոմե Զուրաբիշվիլին:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ՝ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՍՑԵԻՆ

Իր ծրագրային ելույթում Վրաստանի նորընտիր նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, առաջին անգամ երդմնակալության արարողության պատմության մեջ, երախտիքի եւ շնորհակալության խոսքեր հասցեագրեց նորանկախ Վրաստանի պատմության մեջ դյուրին տեղ զբաղեցրած նախագահների հասցեին:

- Անկախ եւ ժողովրդավարական Վրաստանի շինարարության ճանապարհին բոլոր նախագահներն իրենց աղյուսը դրեցին. մեկ դար առաջ Առաջին Հանրապետության ղեկավարները այն ժամանակի համար ընդունեցին արդի եւ առաջադիմական սահմանադրություն: Նշանակալից դեր կատարեց Զվիադ Գամսախուրդիան, երբ անցկացրեց հանրաքվե եւ ընդունեց Վրաստանի անկախության վերականգնման հռչակագիրը: Էդուարդ Շեւարդնաձեն առաջինն էր, որ ճանապարհ բացեց եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման ճանապարհին: Միխեիլ Սաակաշվիլին իր նախագահության առաջին փուլում դրեց բազում նշանակալի բարեփոխումների հիմքերը: Գիորգի Մարգվելաշվիլու նախագահության օրոք նշանակալի քայլեր կատարվեցին ժողովրդավարական գործընթացների հզորացմամբ կայունության հաստատման ուղղությամբ,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին եւ հավելեց, որ իր նպատակն է հնարավոր ամեն ինչ անել, որպեսզի երկիրը զարգանա, նրա եվրոպական ապագան դառնա անբեկանելի, ու ոչինչ չի կարող շեղել այդ ճանապարհից:

ԸՆԴԳԾՎԵՑ ԵՐԿՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՍԱՐ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Երդմնակալության արարողությանը Սալոմե Զուրաբիշվիլին առանձնակի ընդգծեց երկրի տարբեր տարածաշրջանների հավասար զարգացման կարեւորությունը: Նրա խոսքով, եվրոպական տիպի պետությունը նախատեսում է տարածաշրջանների եւ մայրաքաղաքի հավասարաչափ զարգացում: Պատմականորեն Վրաստանի հզորությունը նրա տարածաշրջանների ուժն է, եւ այսօր հնարավորություն է ստեղծվել համեմատելու պատմական փորձն ու արդի եվրոպական պետությունների օրինակները: Վրաստանի տարածաշրջաններում վիթխարի ներուժ կա: Ուստի, մենք պետք է նրանց հնարավորություն ընձեռենք առավելագույն առաջադիմությամբ եւ նոր հեռանկարների ծագման համար: Իմ եւ, համոզված եմ, բոլորի երազանքն է՝ որքան հնարավոր է շատ մարդիկ, որքան հնարավոր է շատ վտարանդիներ վերադառնան հարազատ վայրեր, բնակություն հաստատեն դատարկված բնակավայրերում: Դա այն գործն է, որը մեծ ջանքերի, տարածաշրջաններում ապրող մարդկանց հետ մշտական հարաբերությունների պահանջ է զգում,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՎ ԵՎՐԱՏԼԱՆՏՅԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԵՐԿՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆ Է

Իր ծրագրային ելույթում Վրաստանի նորընտիր նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին անդրադարձ կատարեց երկրի զարգացման, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերին: Նրա խոսքով, վրաց հասարակայնությունը միասնական է երկրի եվրոպական ապագայի հարցում:

- Նախագահի պաշտոնում իմ ընտրությամբ էլ մեր ժողովուրդը կրկին քվեարկեց հօգուտ եվրոպական ուղու: Մենք հետեւողականորեն կշարունակենք ճանապարհը, արժանապատվորեն կհակադրվենք ներքին եւ արտաքին մարտահրավերներին, ավարտին կհասցնենք երկրի համար նշանակալի բարեփոխումները, է՛լ ավելի կհզորացնենք ժողովրդավարական ինստիտուտները: Ժողովրդավարական գիտակցակցության մակարդակի բարձրացումը մեր կարեւոր խնդիրն է: Մենք անվերապահորեն մուտք կգործենք Եվրոպա եւ պետք է մուտք գործենք մեր արժանապատվությամբ, յուրահատկություններով, մշակույթով,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին եւ հավելեց, որ երկիրը կարող է աշխարհին զարմացնել իր հինավուրց հարուստ յուրատեսակ մշակույթով, որը հենված է քրիստոնեության վրա:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

«ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐՈՎԻ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ Է»

ԹԵԼԱՎԻՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ ՆԱԵՎ ՎԻՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, դեկտեմբերի 16-ին Թելավիում կայացավ Վրաստանի հինգերորդ նախագահ Սալոմե Զուրաբիշվիլու երդմնակալության արարողությունը: Հրավիրված գրեթե 1800 հյուրերի թվում էին նաեւ վիրահայ համայնքի ներկայացուցիչներ:

Նշենք, որ՝ որպես օրենք, երկրի նախագահի երդմնակալության արարողությանը միշտ մասնակցել են վիրահայ համայնքի ներկայացուցիչներ՝ խորհրդարանի պատգամավորներ, քաղաքական գործիչներ, հայաբնակ երկրամասերի տեղական իշխանության ղեկավարներ:

Այս տարվա երդմնակալությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Հենզել Մկոյանն ու Ռուսլան Պողոսյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, «Բազմազգ Վրաստան» ոչ կառավարական կազմակերպության ղեկավար Առնոլդ Ստեփանյանը:

Միջոցառման կապակցությամբ դիմեցինք իր ժամանակին Վրաստանի խորհրդարանի երկու գումարումների պատգամավոր, Վրաստանի նախագահի խորհրդական, ճանաչված քաղաքական-հասարակական գործիչ Վան Բայբուրթյանին:

- Եթե չենք սխալվում, Դուք ներկա եք գտնվել Վրաստանի գրեթե բոլոր նախագահների երդմնակալության արարողություններին: Եթե այո, ապա ինչո՞ւմ եք տեսնում սույն արարողության յուրահատկությունը:

- Իրոք, ինձ բախտ է վիճակվել ներկա գտնվել Վրաստանի եւ նաեւ Հայաստանի գրեթե բոլոր նախագահների երդմնակալություններին: Այդ տեսանկյունից բացառություն է կազմել միայն Զվիադ Գամսախուրդիան, որը նախագահական երդում տվեց խորհրդարանում:

Ինչ վերաբերում է ներկայիս արարողության յուրահատկությանը, ապա նշեմ, որ նորանկախ Վրաստանի պատմության մեջ առաջին անգամ, նախկին նախագահը մասնակցեց նորընտիր նախագահի երդմնակալության արարողությանը: Դա ողջունելի, հիանալի երեւույթ է, եւ հուսով եմ, որ այն կվերածվի ավանդույթի: Ներկայիս արարողությունը յուրահատուկ էր նաեւ նրանով, որ առաջին անգամ երդում տվեց կին-նախագահը, ով ծնվել եւ մեծացել է Ֆրանսիայում, վտարանդիի ընտանիքում: Եկեք հաշվի առնենք նաեւ այն, որ այսօրվանից ուժի մեջ է մտնում երկրի նոր սահմանադրությունը, ինչը նշանակալիորեն սահմանափակում է նախագահի իրավասությունները: Երկիրը դառնում է խորհրդարանական հանրապետություն:

- Դուք նշեցիք, որ ներկա եք գտնվել նաեւ Հայաստանի նախագահների երդմնակալության արարողությանը:

- Այո՛: Դրանում էլ որոշակի բացառություն է կազմել Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ 1991 թվականի երդման կարգը: Նա էլ, Զվիադ Գամսախուրդիայի նման, առանց երդմնակալության հատուկ արարողության, երդումը տվեց խորհրդարանում: